

ՆԱԽԱԳԱՀՆԵՐ ԼՎՀՈՒՏ ԵՒ ՊԸՐՐԻ ԳՈՒՄԱՐԵՅԻՆ ԺՈՂՈՎ ՄԸ



Լահուտ եւ Պըրրի

Հանրապետության նախագահ Կոր. Էմիլ Լահուտ երկու ընդունեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրին...

Լահուտ եւ Պըրրի նաեւ խօսեցան երկրին տնտեսական եւ էլեմտական հարցերուն...

Մտնք նաեւ քննարկեցին շրջանային վարչացուցումներն ու անոնց նկատմամբ արարական կեցումաճանաչումները...

Նախագահ Լահուտ երկու ընդունեց նախկին վարչապետ Ռաշիտ Սոլիբ, բանակի ընդհանուր հրամանատար Կոր. Միշել Սլեյմանը...

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԵՐԱԴԱՐՁԱՒ ՊՈՒՐՔԻՆԱ ՖԱՍՈՅԷՆ

Երիտասարդության եւ մարմնակրթության հարցերու նախարար Սեպուհ Յովնանեան Պուրքինա Ֆասուխուս Երկիրներու կազմակերպության երիտասարդության եւ մարմնակրթության նախարարներու ժողովին նախագահել է ետք...

Ժողովը վաերացուց 2002ի իր գործունեության ծրագիրը, ինչպես նաեւ այս ոլորտներէն ներս իգական սեռի մասնակցութիւնը քաջալերելու եւ ողիմպիականներու նախապատրաստութիւններու ծրագիրը:

Ժողովը նաեւ կազմեց յատուկ գրասենեակ մը, որ պիտի հետեւի այս ոլորտներուն գործարարութեան: Լիբանան մաս կը կազմէ այդ մարմինին:

ԱԶԳԱԿԻ ՖՈՆՏԻՆ

● Լուսածին Չօրեքանի մահուան առիթով, Տէր եւ տիկին Բարսեղ Թաշճեան 20 տոյար

ՎԱՐՉԱՊԵՏ ԸԱՐԻՐԻ ԱՆԱԿՆԿԱԼ ԸԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ ՈՒՆԵՑԱՒ ՊԸՐՐԻԻ ԸՏՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երկու կէսօրէ ետք ժամը 1:00ին այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի եւ կարճատեւ հանդիպում մը ունեցաւ անոր հետ:

Թէեւ վարչապետը ոչ մէկ յայտարարութիւն կատարեց, սակայն քաղաքական մեկնաբաններ նկատել տուին, որ այդ անակնկալ այցելութիւնը յաջորդեց մարտի եպիսկոպոսներու խորհուրդի հաղորդագրութեան հրապարակումին:

Լրատու աղբիւրներ հաղորդեցին, որ Հարիրի խորհրդարան ժամանելէ ետք, իր գլխաւորած երեսփոխանական պլոքի անդամներուն հետ խօսակցութեան ընթացքին որոշուեցաւ իր հանդիպումին ընթացքին հաստատեց, որ այս օրերուն մեր դիմագրումը ամենէն վտանգաւոր սպառնալիքը կասկածներ յառաջանցնելու, տարածայնութիւններու եւ բանավեճերու անցնելու մէջ իյնալն է, որովհետեւ այդ պարագան վատ անդրադարձ կ'ունենայ, անխտիր բոլոր լիբանանցիներուն վրայ:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երեսփոխաններու հետ երկու ունեցած իր հանդիպումին ընթացքին հաղորդեցին, որ խորհրդարանի նախագահ Պըրրի վարչապետին եւ երեսփոխաններուն հետ իր ունեցած հանդիպումներուն ընթացքին ընդգծեց մթնոլորտը հանդարտեցնելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ տիրող պայմանները կը թելադրեն, որ արաբական վեհաժողովի նախօրեակին բանավեճերով չտարուինք:

Միեւնոյն աղբիւրները ըսին, որ Պըրրի պատրաստակամութիւն յայտնած է խորհրդարանը բեմ դարձնելու բոլոր կողմերուն եւ ուժերուն միջեւ երկխօսութեան, նոյնիսկ այն կողմերուն, որոնք ներկայացուած չեն խորհրդարանէն ներս, եւ ան կոչ ուղղած է այդ կողմերուն՝ հանդարտօրէն քննարկելու բոլոր հարցերը:

ՊԸՐՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԿԵՑՈՒԱԾՔ ՈՐԴԵԳՐԵԼՈՒ ԿՈՉ Կ ՈՒՂՂԷ ԼԻԲԱՆԱՆՅԻՆԵՐՈՒՆ

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի երեսփոխաններու հետ երկու ունեցած իր հանդիպումին ընթացքին հաստատեց, որ այս օրերուն մեր դիմագրումը ամենէն վտանգաւոր սպառնալիքը կասկածներ յառաջանցնելու, տարածայնութիւններու եւ բանավեճերու անցնելու մէջ իյնալն է, որովհետեւ այդ պարագան վատ անդրադարձ կ'ունենայ, անխտիր բոլոր լիբանանցիներուն վրայ:

Ան վերահաստատեց, որ Սուրիայ ճակատի գործակցութեան, որովհետեւ միայն անիկա կրնայ դրական արդիւնքներ տալ, գործ մոյմպէս պիտի վայելն բոլոր լիբանանցիները:

Խաղաղ Պաշտար Աստի Լիբանան այցելութիւնը տուած է դրական արդիւնքներ, գործ ողջունած են բոլոր կողմերը, եւ նկատել տուաւ, որ այս մթնոլորտը դրական անդրադարձ ունեցաւ ելեմտական շուկային եւ տնտեսական մթնոլորտին վրայ:

Պըրրի նաեւ ըսաւ, որ վճռած է թափ տալ խորհրդարանի լիազօմարներուն եւ խորհրդարանական յանձնարարներուն միջեւ յարաբերութիւնը, եւ արաբական վեհաժողովն ետք խորհրդարանը անընդհատ աշխատանք պիտի տան իր ընթացքով եւ վաերացուցնելու սպառնալիքներուն միջեւ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ԺԵ. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԳՈՒՄԱՐՈՒԵՑԱԻ

1, 2, 3 Մարտ 2002ին գումարուեցաւ Համազգայինի Լիբանանի Շրջանային ԺԵ. Ժողովը, ներկայութեամբ Կեդրոնական Վարչութեան, Շրջանային Վարչութեան, մասնաճիւղերու ներկայացուցիչներուն, ինչպէս նաեւ ժողովին կողմէ հրաւիրուած համազգայնականներուն:

Համազգայինի 15րդ Շրջանային Ժողովին հիմնական օրակարգերն էին քննարկումը՝ Համազգայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան քսաներկուամսեայ գործունեութեան, ինչպէս նաեւ Համազգայինի Դ. Պատգամաւորական Ժողովի օրակարգերը:

Ժողովի աւարտին ընտրուեցան Համազգայինի Դ. Պատգամաւորական Ժողովին Լիբանանի շրջանի ներկայացուցիչները:

ՀՄԿՈՒՄԻ ԵՐԵԿՈՅ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷՋ

Ուրբաթ, 8 Մարտ 2002ին, երեկոյեան ժամը 7:00ին, հսկումի արարողութիւն պիտի կատարուի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ, երգեցողութեամբ Դպրեվանքի սաներուն:

Պիտի բարոզէ՛ ԳԵՈՐԳ ՍՐԿ. ՓՄՇԱՅԵԱՆ

Սիրով կը հրաւիրեմք հաւատացեալ ժողովուրդը՝ մերկայ գտնուելու եւ մասնակցի դառնալու սոյն արարողութեան:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐԵՈՒՐԴ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՅԻՈՅ

Հ. Յ. Դ. ԼԵՄԻ «ՐԱՖՅԻ» ՄԱՍՆԱԾԻՒՂ ԱՐՑԱԽԵԱՆ ԱԶՆԱԳՐԱԿԱՆ ՊԱՅԵԱՐԻ 14ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Բանախօս՝ Հ. Յ. Դ. ԲԻԻՐՈՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԳԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆԿԵՐ ՍԱՐԳԻՍ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 10 Մարտ 2002ին, Ազգային Արեւստից վարժարանի բակին մէջ, երեկոյեան ժամը 6:00ն սկսեալ:

ԵՐԱԽԻՐ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ՆՈՐ ՇԵՆՔԻ ԲԱՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ



Վեր. Սկրտիչ Գարակեօզեան, Վեր. դոկտ. Ժամ Խանճեան եւ ճախարար Արիտի կը քակեն ժապաւեճը:

Երկուշաբթի, 4 Մարտի երեկոյեան, տեղի ունեցաւ Հայկազեան Համալսարանի նոր շէնքի բացման արարողութիւն: Հովանաւորութեամբ տեղեկատուութեան նախարար Ղազի Արիտի:

Համալսարանի նախագահ դոկտ. Ժամ Խանճեանի ողջոյնի խօսքէն ետք նախարար Արիտի ըսաւ. «Հայկազեան Համալսարանը լիբանանեան է բառին ամբողջական իմաստով: Ան կը կրէ հայկական անուն, սակայն ան ուսում կը ջամբէր եւ կը շարունակէ ջամբել լիբանանցի ուսանողներուն՝ բոլոր համայնքներէն եւ շրջաններէն, ինչպէս նաեւ կ'աշխատի մարդու, լիբանանցի՝ մարդու ծառայութեան եւ անոր կարողութիւններուն զարգացման համար»:

Խօսք առաւ նաեւ դոկտ. Յատի Ասրաւոյի եւ անդրադարձաւ Հայկազեան Համալսարանի արհեստագիտութեան նորութիւններուն հետ միշտ քայլ պահելու երեւոյթին:

Այնուհետեւ դոկտ. Արտա Էքմէճճի խօսեցաւ դասախօսութեանց նոր դասընթացի կարելիութեանց մասին՝ նկատի ունենալով, որ ան կ'ապնէ համալսարանի եւ աշխարհին միջեւ:

ՄԻՋԻՆՔԻ ԱՌԻԹՈՎ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷՋ

Մեծ Պահօց կիսուն՝ Միջինքին, Լիբանանի թեմի հայոց առաջնորդ Գեղամ Եպս. Պաշեբեանի հրաւերով, Արամ Ա. կաթողիկոս նախագահեց Պէյրութի Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ Արեւազալի արարողութեան եւ տուաւ իր հարգապատկան պատգամը: Իր ողջոյնի խօսքին մէջ առաջնորդ սրբազանը անդրադարձաւ խորունակուող այս եկեղեցի կրեւոյթին եւ գայն նկատեց գոտեպնդիչ ու յուսադրիչ՝ ընդհանրապէս լիբանանահայութեան եւ յատկապէս շրջանի հայութեան համար:

Եկեղեցական արարողութեան աւարտին տուած իր պատգամին մէջ վեհափառը անդրադարձաւ առաջնորդի տիպարին՝ գայն քաղելով Արեւազալի յատուկ արթթեման մէջ: Վեհափառը շնորհ, թէ իրաւ առաջնորդը այն է, որ միայն չի՛ խօսիր, այլ կը ծառայէ, «սիրով, հաւատքի ծառայութեան քարոզիչը կը դառնայ»:

Այս առիթով Մայր Եկեղեցւոյ թաղականութեան եւ տիկնանց յանձնարարութիւն կողմէ ի պատիւ վեհափառին ճաշկերպ մը տրուեցաւ, որուն ներկայ գտնուեցան նաեւ դպրեվանքի սաները: Ճաշի պահուն փակման խօսքը կատարելով՝ վեհափառը բացատրեց ազգային - կրօնական խորհրդանիշներուն տեղն ու դերը ժողովուրդներու եւ եկեղեցիներու, կրօններու ու այլազան կառույցներու կեանքին մէջ: «Ազգեր, կրօններ, կազմակերպութիւններ խորհրդանիշները կ'օգտագործեն իրենց աղբիւր ուժի ու իրենց կեանքի վերանորոգութեան: Սակայն գանոնք իբրեւ վախճանական նպատակ ըմբռնել կրնայ տկարացնել ազգի մը կամ հաւաքականութեան մը յաւաքիմութեան ոգին եւ ուրիշներուն բացուելու պատրաստակամութիւնը: Խորհրդանիշները երբ դադրին տեսիլք ներշնչելէ ու վերածուին աման քարոզչութեան ու դրամագրութիւնի, կը կորսնցնեն իրենց իրաւ իմաստն ու պատմական նշանակութիւնը այսօրուան աշխարհին մէջ», ըսաւ Արամ Ա. կաթողիկոս:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ ՎԱՆԱՅ ՉԱՅՆ Այսօր կ'տօրուան ժամը 1:00ին կրնաք լսել մեր հարցազոյցը՝ Ը.Մ.Ս.Ի ՖՈՒԹՊՈԼԻ ԽՈՒՄԲԻ ՍԱՐԶԻՉԻՅԻՆ հետ, խումբի մերկայ կացութեան եւ հեռանկարներուն մասին: ● Յայտագիրին կրկնութիւնը՝ երեկոյեան ժամը 6:00ին:

ՅԱՅՄԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը լիբանանահայ ընտանեկաններու կը տեղեկացնէ, թէ նոր ընտանեկաններու անուանացանկը (լուսին շաքար) հրապարակուած են ներքին գործոց ճախարարութեան կողմէ: Այն քաղաքացիները, որոնք 2000ի երեսփոխանական ընտրութիւններուն չկրցան ընտարել՝ անուանի կամ այլ սխալի պատճառով, ճախարարութեան որոշումով իրաւունք ունին մինչեւ 11 Մարտ 2002 կատարել սրբագրութիւններ: Սրբագրութիւններ եւ ստուգումներ կատարելու համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Ճաղոյեան» Մշակութային Կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01-259881:

Դիմողները պարտաւոր իրենց հետ ունենալ ինքնաձեռագրուած քայտի լուսապատճեն մը: ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Հրամանատարական Մասնու

ԳՐԱԿԱՆ ԻՐԱԳԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ ԵՏՔ

Ի շխանութիւններու մօտիկ պաշտօնական շրջանակներ կը յայտնեն, որ Սուրբոյն յախագահ Պաշտօնատիր Պէյրութ յայտնութիւնը կը հաստատէ սուրիական յանձնառութիւնը Լիբանանի մէջ կառուցութեան նկատմամբ եւ նախագահ Ասատի անձնակազմի հետաքրքրութիւնը լիբանանեան թղթածրարին աւելի մօտէն հետեւելու առնչութեամբ:

Այդ շրջանակները նկատելի կու տան, որ այցելութեան մասին համաձայնութիւնը կայացուած էր երկարատեւէ ի վեր եւ հաստատուած էր այցելութեան քանի մը օրեր առաջ՝ նախագահ Գոր. Էմիլ Լահուտի եւ նախագահ Ասատի միջեւ հեռաձայնային հաղորդակցութեան մը ետք, հաղորդակցութիւններ, որոնք որեւէ պարագայի չեն կտրուած երկու նախագահներուն միջեւ եւ տակաւին հերթականօրէն պիտի շարունակուին, եթէ անոնց անհրաժեշտութիւնը զգացուի:

Տրամաբանական է, որ այցելութիւնը նկատուի սուրիական ղեկավարութեան կողմէ լիբանանեան իշխանութիւններուն, առաջին հերթին՝ նախագահ Լահուտի տրամադրութեամբ գորակցութիւն, մասնաւոր՝ խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ վերջերս տեղի ունեցած սուր բանավէճերէն ետք, որոնք այն տպաւորութիւնը ստեղծեցին, որ այս երկուքը մենաշնորհի վերածած են որոշուած կայացնելու գործընթացը:

Նոյն շրջանակները դիտել կու տան, որ նախագահ Ասատ սովորաբար չի միջամտեր լիբանանեան քաղաքականութեան մանրամասնութիւններուն, սակայն իրեն կը վերապահէ այդ մանրամասնութիւններուն հետ պարտկուտ հարցը, մասնաւոր ինչ վերաբերի իշխանութեան պետերու դիրքերուն եւ անոնց միջեւ յարաբերութիւններուն:

Սուրբոյն նախագահը շատ լաւ յարաբերութիւններ ունի նախագահ Լահուտի հետ, եւ անոր հետ կը խորհրդակցի մնայուն կերպով՝ երկու երկիրները հե-

տաքրքրող հարցերու շուրջ: Ան նաեւ ամուր եւ լաւ յարաբերութիւններ ունի խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրիի հետ, միեւնոյն ժամանակ կը նկատէ, որ վարչապետ Ռաֆիք Հարիրի անհրաժեշտութիւն մըն է եւ կարելի չէ հրաժարիլ անկէ:

Նոյն շրջանակները կը յայտնեն, որ նախագահ Ասատի այցելութիւնը, ինչպէս որ տեղի ունեցաւ իր ձեռով, ժամկէտով եւ բովանդակութեամբ կը ներկայացնէ զարգացում մը լիբանանեան իրականութեան հետ վարուելու ձեւին մէջ, կը հաստատէ երկու երկիրներուն միջեւ գոյութիւն ունեցող առողջ յարաբերութիւնները եւ կը վերահաստատէ յանձնառութիւնը՝ համագործակցութեան, եղբայրութեան եւ երկու երկիրներուն միջեւ համակարգումի համաձայնագրի մը առնչութեամբ՝ լիբանանեան սուրիական գերագոյն խորհուրդին կանոնաւոր կերպով երկար ժամանակէ ի վեր ժողով չզուգարելուն շուրջ հարցականներ ստեղծուելէն ետք:

Բայց ամէնէն ակնառու պատգամը, որ նախագահ Ասատի այցելութիւնը իրեն հետ բերաւ, ողջունումն էր այն բոլոր նախաձեռնութիւններուն, որոնք կը վերահաստատեն արարներուն իրաւունքը՝ հիմնուելով միջազգային հանրութեան որոշումներուն վրայ, սակայն առանց մտնելու նախօրոք գրուած պայմաններու անհեթեթութիւններուն մէջ: Պահանջուածը ո՛չ թէ Արաֆատի հետ եղած փորձը ուրիշներու վրայ ալ կիրարկելն է, այլ պարզապէս նախօրոք վերադարձնելն է իր ճիշդ ուղիին:

Վերոյիշեալ շրջանակները կը յայտնեն, թէ Ասատի այցելութեան կարգ մը դրական կողմերը ի յայտ պիտի գան արարական վեհաժողովին հետք: Այդ դրական երեւոյթներուն շարքին պէտք է լինել Լիբանանի մէջ սուրիական ուժերու նոր վերադասաւորումը եւ քաղաքական կարգ մը թղթածրարներու փակումը:

ԱԼԹՈՒՄԱՆ ՄՐԱՍ

«Տիար»

ԱՆՇԻՇԸ ԿԸ ՑԱՆՈՒԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻՆ ԵՒ ԿԸ ՔԱՂՈՒԻ ՄԱՅԻՍԻՆ

Վերջերս ապահովական ուժերը Պեքաւայի մէջ փնտնողին հաշիւի դաշտեր: Այս առնչութեամբ տարածուած լուրերուն համաձայն, այս ցամաք աշխուժացած է հսկողութեան բացակայութեան պատճառով: Ի՞նչ է աֆիոնը, ի՞նչ պէտք կը ցանուի, ի՞նչ տարրողութիւն ունի եւ անկէ բուժուելու կեդրոններ կա՞ն Լիբանանի մէջ:



Ցական թուականներուն, պատերազմի ընթացքին աշխուժացած աֆիոնի ցանքը արդիւնաւոր էր համարուի Լիբանանի մէջ: Այս բոյսին ցանքը այդ շրջանին աշխուժացաւ՝ հսկողութեան բացակայութեան, իշխանութիւններու տկարութեան եւ այդ ցանքով զբաղող հողագործներուն նկատմամբ յատուկ պատիժներ չորոգեցրելու պատճառով:

Աֆիոնին տեսքը շատ գեղեցիկ է իր ծաղկելու առաջին հանգրուանին: Անոր ծաղկները քանի մը գոյն կ'ըլլան, դեղին, կանաչ, ճերմակ եւ մանիշակագոյն:

Մարդիկ աֆիոնին ծանօթացած են Քրիստոսէ առաջ: Այդ իրողութեան փաստերն են Լոնտոնի գիտական թանգարանին մէջ գտնուող կաւէ անօթները, որոնց վրայ աֆիոնի ծաղիկներու նկարներ գծուած են: Այս անօթները մեզի հասած են պրոնզէ դարէն, երբ մարդիկ անոր մէջ կը լեցնէին աֆիոնի հիւթ, զայն կը խառնէին ջուրի եւ ոգելից ըմպելիի եւ կը հրամայէին իրրեւ համով խմիչք, որ խմողին մօտ հրճուանք կը յառաջացնէ:

Պատմութիւնը կը վկայէ, թէ «Ապու Քարաթ»՝ բժշկութեան հայրը, աֆիոնը օգտագործած է Ն. Ք. չորրորդ դարուն: Իր հիւանդները բուժելու համար այս բոյսը օգտագործած է նաեւ Տիբեթի ժողովուրդը:

Պատմութիւնը Բագոսի տաճարին վրայի փորագրութիւնները ցոյց կու տան, թէ հուսկէ ցանկերը եւս ճանչցած են այս բոյսը:

Հաշիւը եղիպտոսի մէջ ժամանակին ճանչցուած էր իրրեւ «քունի հայր» եւ անիկա կը ցանուի Հնդկաստանի, Ռիչին Արեւելքի, Ասիոյ արեւելեան երկիրներու եւ Չինաստանի մէջ:

Կ'ըսուի, թէ արարները այս բոյսը օգտագործեցին եւ զայն Եւրոպա փոխադրեցին: Կ'ըսուի նաեւ, թէ Պարսիստի քաղաքները ինք զտաւ աֆիոնի առաւելութիւնները բուժման համար եւ անկէ ետք դրագէտները եւ արուեստագէտները զայն օգտագործեցին, որպէսզի իրենց «մուսա»ները գան:

Ի՞նչպէս կը ցանուի աֆիոնը: Հողագործ մը կը վկայէ (ան չուզեց իր անունը յիշել), թէ աֆիոնի ցանքը կը սկսի Հոկտեմբերի կիսուն եւ զայն քաղելու ժամանակը կը նկատուի Մայիսի վերջերը:

Ան աւելցուց, թէ այս բոյսի ցանքը կը պահանջէ բարձր ջերմաստիճան եւ անիկա գործնականօրէն բաւական ծախսալից է, որովհետեւ պէտք ունի յատուկ խնամքի եւ բժանդիտութեան:

Հողագործը կ'ըսէ, թէ հաշիւն աֆիոն հանելու համար պէտք է սպասել, որ ծաղկները իյնան եւ աֆիոնը հասունանայ: Անկէ ետք, հողագործը դանակի մը միջոցով կը կտրէ աֆիոնի «գանդերը» եւ այդ ճեղքերէն դուրս կու գայ ճերմակ գոյնով՝ հիւթ մը, կաթիլ նման, որ չորանալէն ետք սրճագոյնի կը վերածուի:

Ըստ հողագործին, այս գործողութիւնը պէտք է առաւելապէս կատարուի: Անոր համաձայն, աֆիոնի «գանդերը» կրնան ճեղքուիլ երկու, երեք կամ աւելի անգամներ, նայած հիւթի առատութեան եւ բոյսի ուժգնութեան:

1806ին, գերմանացի ղեկավար Ֆրեդերիկ Սիլբից ուսումնասիրութիւններ կատարելէ ետք նախընտրեց օգտագործել ճերմակ հիւթը, որ ծանօթ է մորֆին անունով: Այս անունը եկած է յոյներու երագներու Աստուծոյ «Մորֆիս» անունէն: Աւելի ուշ աֆիոնին մէջ գտնուեցան նաեւ այլ՝ նիւթ մը N03 - H23 (C22)ն, որուն տոկոսը 75էն 90 առ հարիւր է, իսկ C19 H21 N03ին տոկոսը աֆիոնին մէջ 65 է: Աֆիոնին մէջ գտնուեցան նաեւ այլ բաղադրիչներ եւ քիմիական նիւթեր, ինչպէս հաշիւը, յոստանիֆինը եւ հերոյինը: Մորֆինը 1830ական թուականներէն ի վեր կ'օգտագործուի իրրեւ բուժիչ դեղորայք:

Պատմական հեթիմներուն համաձայն, աֆիոնի գործածութիւնը տարածուեցաւ ասեղներու միջոցով, գինուորներուն միջեւ, ամբիկեան քաղաքացիական պատերազմի եւ Պրուսիա - Ֆրանսա պատերազմներու ընթացքին ու ճանչցուեցաւ իրրեւ «գինուորներու հիւանդութիւն»:

Եւ եթէ այսօր աֆիոնը անհետնեցնուած համար արգիւտուած է եւ անոր համար մարդիկ կրնան քանի մը տարիով բանտարկուիլ, ապա կարգ մը պետութիւններ կը ցանեն, կը պատրաստեն եւ կ'արտածեն այդ բոյսը:

Հնդկաստանի արեւելեան շրջաններուն մէջ աֆիոնը կը պատրաստուի յատուկ հաստատութիւններու մէջ, եւ հոն կը գտնուին յատուկ գործարաններ այս աշխատանքին կիրարկման համար: Այս աշխատանքով կը զբաղին շուրջ 850 հազար գործաւոր եւ հողագործ, զանազան շրջաններու եւ զիւղերու մէջ: Աֆիոնը յատուկ տուփերու մէջ կը դրուի ամէն կէս ժամը անգամ մը, մօտ 12 օր ետք: Աֆիոնը կը վերածուի կակուղ սեւ նիւթի մը, կը լեցուի եւ կը ծածկուի յատուկ թուղթով մը, ապա կ'արտածուի:

Այս գործարաններուն մէջ աշխատողները գործարանէն դուրս ելլելէ առաջ խիստ քննութեան եւ փնտնութեան կ'ենթարկուին, որպէսզի չկարենան այս նիւթը գողնալ կամ անոր բաղադրիչներէն ո՞մանք դուրս բերել գործարանէն եւ դուրս ուղարկել: Նոյն պատեան այդ գործաւորները կ'ենթարկուին նաեւ բժշկական յատուկ քննութեան, որպէսզի ստուգուի, թէ անոնք հաշիւ չեն օգտագործեր:

Երբ աֆիոնը չորանայ, անկէ կը հանուի նիւթ մը, որ մորֆին կը կոչուի, իսկ մորֆինէն հանուած նիւթը կը կոչուի հերոյին: Այս գործածութեան ընթացքին կ'աւելցուի շաքարի սեւակ մը յարթօք սեւակէն, ինչպէս նաեւ՝ այլ պարարտացուցիչ նիւթեր, եւ այսպիսով իւրաքանչիւր 1000 կրամ մորֆինէն կը ստանան 800 կրամ կուտ հերոյին: Հերոյինը կարելի է օգտագործել քայլի մը ձեւերով, ինչպէս՝ շնչելու միջոցով: Բժշկական ուսումնասիրութիւններու համաձայն, հերոյինը շնչելու ճամբով կ'օգտագործուի, որովհետեւ քիթին մէջ կան յատուկ արեան գեղձեր, որոնք տաք եւ խոնքաւ կ'ըլլան եւ անոնք ուղարկի հերոյինի ազդեցութիւնը կ'առնեն: Հերոյինը շնչելէ ետք, շնչողը կը սկսի անոր ազդեցութիւնը զգալ: Անոր սրտի զարկերը կը դանդաղին, արեան ճնշումը կը նուազի եւ հերոյին օգտագործողը քունի պահանջը կ'ունենայ:

Իսկ թմրեցուցիչի մոլի ըլլալու ազդանշանները կը համարուին ջղախիտ անհասարակութիւններ, աչքերու եւ կոկորդի բորբոքում, մնայուն արիւնախառն հազը, աչքի հիւսկէներու նեղութիւն եւ այլն:

Ըստ բժիշկներու, աֆիոնի մոլի ըլլալը կը յայտնուի, երբ բժիշկը նայի հիւանդի աչքի բերին, որ պոտիլցած կ'ըլլայ զնդաւորի նման: Աֆիոնի գործածութեան պատճառով անհետը չի կրնար խաղաղիլ բնականոն կեանք մը ապրիլ, ան չի կրնար խախտիլ, եթէ աֆիոն չօգտագործէ, որովհետեւ անիկա անհատին հանգստութիւն եւ կարողութիւն կու տայ: Թմրեցուցիչի համար անձ մը կրնայ անբեւեակայելի բաներ ընել, ինչպէս՝ զոգութիւն, յանցագործութիւն, որպէսզի կարենայ աֆիոն ապահովել:

Իսկ եթէ թմրամոլ մը չկարենայ աֆիոն ձեռք ձգել, անոր մօտ կը յայտնուի կարգ մը ազդանշաններ, որոնք կը կոչուին «աֆիոնի ազդանշաններ», որոնց կարգին՝ քիթի եւ աչքի հարցեր, քրտինք, մարմնի ընդհանուր սուր ցաւեր, փորհարութիւն, ջերմութեան նուազում, սրտի զարկերու արագացում, արեան ճնշումի բարձրացում, ջրազարուութիւն եւ այլն:

Բժիշկներուն համաձայն, այս մոլութենէն բժշկուելու յատուկ կեդրոններ կան, ուր հիւանդներուն կը տրուի այլ տեսակի աֆիոն մը, իսկ եթէ աֆիոնը թունաւորութեամբ յառաջացած է անոր մօտ, իրենց կը տրուի աֆիոնի զնջուցիչ, որը անհատին կարելիութիւն կու տայ շնչելու եւ առողջ ըլլալու:

Վերջին հարցումը այն է, թէ ե՞րբ աֆիոնի ցանքը վերադարձաւ Պատարկէ:

Այս առնչութեամբ տեղեկութիւններ ունեցող աղբիւրներ հաստատեցին, թէ Պատարկէի մէջ կայ շուրջ 15 հազար հեկտար հող, ուր աֆիոն կը ցանուի: Այդ շրջանները բաժնուած են Պատարկէի, Քնէյսաթի, Ֆայսաթի, Սասաթի, Պատարկի եւ յատկապէս Հըր-մէյի մէջ:

Եւ հարցումը կը մնայ, թէ ուրիշ՞ կը տիրանան աֆիոնի հունտերուն, որոնք տարիներէ ի վեր անզբտանելի էին: Նշուեցաւ նաեւ, թէ յաւազոյն հունտերը թրքական ու աֆղանական են, իսկ երրորդ կարգին կու գան իրանականները:

ՍԵՂՈՒՄ ՄՈՒՆԵՐ ԵՄԸԻ

«Նահապ»

ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼ ԻՐԱՅԵԼԵԱՆ ՍԱՍՈՒԼԻՆ ՄԷՋ

ԿԱԽՈՒԱԾ ԵՆՔ ԴԺՈՒԽՔԻՆ ՄԷՋ ԵՒ ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ ՑԱՂԹԵՅ ՇԱՐՈՆԻ ԿԸ ԳՐԷ «ՄԱՍԻՒ»

Իսրայէլեան օրաթերթերը 3 Մարտին անդրադարձած էին այն վտանգաւոր կացութեան, որ ստեղծուած էր վերջին օրերուն ընթացքին: Անդրադարձներուն մեծամասնութիւնը կեդրոնացած էր արիւնահեղութեան երեւոյթին վրայ, որմէ կարելի չէ ձերբազատիլ բացի եթէ կողմէրը վերադառնան բանակցութեան:

Այս անդրադարձներուն կարգին էր յօդուած մը, որուն հեղինակն էր Համի Շարիւն՝ «Մասարիլ» օրաթերթին: Յօդուածին խորագիրն է «Կախուած ենք դժոխքին մէջ»: Ստորեւ կու տանք յօդուածի մէկ կարեւորագոյն հատուածը:

«... Բոլորն ալ կը կարծէինք, թէ անկարելի է, որ աւելի վատ բան մը պատահի: Կը թուի, թէ «արիւնի շրջանակ»ը ինքնաշարժի մը պէս խնկի արագութեամբ կ'ուղղուի մահուան ձոր, երէկ արձանագրուեցաւ թիւ 301 գոհը՝ վայրագութեան երեւոյթներու սկիզբէն ի վեր եւ այս թիւը կոշուած է աւելի եւս բարձրանալու:

«Հաւանական է, որ իսրայէլեան բանակի գաղթապաշտներուն մէջ նախաձեռնած գործողու-

թիւնները ունենան գինւորական կարեւորութիւն, ինչպէս որ կը յաւանորդեն մասնագէտներ, սակայն հարցումը հետեւեալն է. պէ՞տք է գործողութիւններուն կարեւորութիւնը չափել այն ամբաստանեալներուն վրայ, որոնք ձերբակալուեցան, թէ գէ՞նքերու գործարաններով, որոնք բացայայտուեցան, կամ ենթակառուցներով, որոնք քանդուեցան:

«Կրնայ ուղղակի կապ մը գոյութիւն չունենալ պարզապէս գանազան շրջաններու մէջ տեղի ունեցած գործողութիւններուն եւ երեսօղակէ մի մէջ կատարուած յարձակումին միջեւ, այսուհանդերձ գոհարար է անտեսել այն իրողութիւնը, որ ամէն անգամ որ ուզենք պատգամ մը ուղարկել պարզապէս ինչպէս որ ան փոխուի չէ, որ ան փոխուի չէ կը պահանջէ ցոյց տալ համարելութիւն եւ զիմադրութիւն, սակայն ըստ երեւոյթին համարելութիւնը սկսած է հատուկ նշանակութիւն ունենալ: Վերջին ուսումնասիրութիւններուն համա-

ձայն, իսրայէլացիները սկսած են կորսնցնել իրենց վստահութիւնը այն մարդուն նկատմամբ, որ յայտնի է ահաբեկչութեան դէմ շղթայագործած իր պայքարով, սակայն ըստ երեւոյթին ահաբեկչութիւնը ինքն է որ յաղթեց իրեն, եւ ամբողջութեամբ փրկուածի փողովորային աջակցութիւնը Շարիւնի նկատմամբ, այն ժամանակ պիտի անյայտանայ իր քաղաքական յենարանը եւ ինքն ալ պիտի կործանի:

«Իսրայէլեան կառավարութեան դիմաց կարեւորութիւնը չկայ զոյգ փապուղիէն դուրս ելլելու: Ան արդէն բաժնուած է Եսաթ Արաֆատին վերջը մը ինչպէս սուսանդերձ ծայրայեղականներու եւ քաղաքական լուծում մը փնտնողներու միջեւ: Անոր համար այն չի կրնար վերջնական որոշում մը տալ այս կամ այն ուղղութեամբ: Այսպիսով մենք բանարկականներ ենք դժոխքին մէջ եւ մեզի լուծելու պարտապարտուած է»:

ՈՒՆՏԱ ՀԱՅՏԱՐ

«Նահապ»

Կնոջական

ԿԻՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆՆԱ ՄԱՅՆԻԵԱՆ

«Սաղմոս Ընկերներու Միությունը» վերջերս հրատարակեց «Շարականներ» անունով խոսասարկար (Սի. Տի.Ն), որ կ'ընդգրկէ հոգեւոր երաժշտութեան ընտրանի մը (12 տաղեր եւ շարականներ), կաթողիկէ եկեղեցւոյ երգչախումբի մենեքրիչ Աննա Մայրիեանի կատարողութեամբ:



Այս առիթով գերմանական «Էր Տեյլալիկ» («Հողի Ձայն») երաժշտական ընկերութիւնը փափաք յայտնած է իր ծախսերով այս ամրան հրատարակել հայկական 19 տաղեր եւ շարականներ ըզմանողակող նոր խոսասարկար մը, կատարողութեամբ Աննա Մայրիեանի եւ անոր ղեկավարած «Վարդապետներ» համոյթին:

Մայրիեան վերջերս Հունգարիոյ մէջ Պուտափէշթի սենեկային նուագախումբին հետ ներկայացուց «Հայկական Առասպել» օփերան, որ կը ներկայացուցնէ Հայաստանի մէջ քրիստոնէութեան ընդունման դրուագները:

ՊԱՆԿԱԿԱՆ ՀԱՐԻՐ

Վերջերս երեսփոխան Պահիա Հարիրի մասնակցեցաւ ԵՄԻՆԵՍՔՕԻ Փարիզի մէջ կազմակերպած «Քարի կամեցողութեան» դասաւանդութեան ժողովին:



Այս ժողովը, որուն կը մասնակցէին նաեւ իտալացի դերասանուհի Քլոտիա Քարտինիայէն, Մարտի իշխանուհի Լիա Մարիամը, սէուտցի գործատէր Ղասսան Շաքէրը, Յորդանանի իշխանուհի Ֆարիա Մոհամէտ Պրն թալարը եւ երաժիշտ Ժան Միշէլ Ժարը, ԵՄԻՆԵՍՔՕԻ կողմէ նշանակեց երկու պատուիրակ, որպէսզի տեղական իշխանութիւններուն հետ համադրական աշխատանք տանին եւ անհրաժեշտ օգնութիւնը հայթայթեն:

Նոյն ժողովին երեսփոխան Հարիրի արծարծեց պարտիանցի երեխաներու հարցը եւ անոնց արագ օգնութեան փութալու անհրաժեշտութիւնը:

ՔԼՈՏԻԱ ՔԱՐՏԻՆԱԼԷ

Պերլինի շարժապատկերի 52րդ փառատոնին, առաջին անգամ ըլլալով ցուցադրուեցաւ Քրտինա սական «Ութ կիներ» փապաւէնը, որուն գլխաւոր դերասանուհիներէն մէկն է Քարտինա Տէօնէօլ:



Փապաւէնը մեծ յաջողութիւն գտաւ եւ արժանացաւ «Արծաթեայ Արջ»ը մրցանակին:

Նոյն փառատոնին իտալացի հռչակաւոր դերասանուհի Քլոտիա Քարտինայէն արժանացաւ «Ոսկի Արջ»ը մրցանակին՝ շարժապատկերի աշխարհին իր բերած մեծ նպաստին համար:

ՃՈՆ ՔՈՒԼԻՆՉ

«Տայնըսթի» պատկերասփիւռի յայտագիրին գլխաւոր դերասանուհի Ճոն Քոլինզ Լոնտոնի «Քլարիչ» պանդոկին մէջ մեծ խնճող մը սարքեց իր ամուսնութեան առիթով:



Քոլինզ, որ ներկայիս 68 տարեկան է, ամուսնացաւ Փիլիպ Կիպրենի հետ, որ իրմէ 32 տարի փոքր է...

Խնճոյքին ներկայ էին 175 հրաւրեալներ, որոնց կարգին՝ Հովիվուտի աստղեր: Այս առիթով, Քոլինզ յայտարարեց, որ իր նախկին ամուսնութիւնները չեն հաշուուրդ, որովհետեւ անոնք արագ որոշումներ էին եւ իսկական սիրոյ վրայ հիմնուած չէին, հետեւեալ Փիլիպի հետ իր ամուսնութիւնը կարելի է նկատել «առաջին ուրախութիւնը իր կեանքին մէջ»:

ՎՈՒՓԻ ԿՈՒՏՊԵՐԿ

Օնթարիոյի օդակայանին մէկ աղբակոյտին մէջ ընկած է դերասանուհի Վուփի Կոտպերկի «օսքար»ը, գոր 1990ին ան շահած էր «Կոսթ» փապաւէնին մէջ իր ստանձնած դերին համար:

«Օսքար»ին արձանիկը գողցուած էր, երբ դերասանուհին գայն Շիբալկօ փողոցը մէջ նորոգութեան համար:



ՓՈՐՁ - ԸՆԴՅԱՐԱՆ

ԻՆՉՊԻՍԻ՞ ՀՄԱՅՈՂ ՄԸՆ ԷՔ

Կանացի հմայքը... Այրերը կրնան հատորներ գրել այդ մասին: Բայց հմայքը վայելչութեան նման է, սորվելով չի յայտնուիր, մեր մէջ ունինք կամ չունինք գայն:

Իմանալու համար, որ ինչպիսի՞ հմայք մըն էք, պատասխանեցէք այս փորձ - հարցարանին՝ ընտրելով հաւանական 3 պատասխաններէն յարմարագոյնը, ապա ցուցատախտակին հիմամբ ձեր հաշիւները կատարելէ ետք, կարդացէք արդիւնքը:

Բ.- Շատ կարճ փէշը:
Գ.- Մինչեւ ոտքերը հասնող երկար փէշը:

-6-
Երբ կը շարժուիք, շեշտը կը դնէք՝
ա.- Ձեր աչքերուն վրայ:
բ.- Ձեր բերնին վրայ:
գ.- Ատերուն վրայ:

-7-
Հմայելու համար՝
ա.- Կը խնդացնէք:
բ.- Կը լռէք:
գ.- Հարց մը կ'արձարձէք:

-8-
Դիմակահանդէսի մը պիտի երթաք, կը ծպտուիք իբրեւ՝
ա.- Կոնկրետորա
բ.- Գեղջիկուհի:
գ.- Դատաւոր:

-9-
Երբ անուշահոտ կը քսուիք՝
ա.- Իսկական արարողութեան մը կը վերածէք գայն՝ անուշահոտը քսելով ձեր ականջներուն ետեւ, դաստակներուն վրայ, արմուկներուն ներքին ճեղքերուն միջեւ...:
բ.- Անուշահոտին սրուակին կէսը կը պարպէք ձեր վրայ:
գ.- Շատ արագ եւ պատահական քանի մը տեղ կը սրսկէք:

-10-
Հաւաքոյթի մը ամբողջ տեւողութեան ձեզ ուշիուշիով դիտող երիտասարդ մը վերջապէս կը մօտենայ եւ կ'առաջարկէ միասին խմիչք մը առնել... կը ձեւացնէք, որ՝
ա.- Շատ զարմացած էք:
բ.- Կը տատամսիք:
գ.- Միտով կ'ընդառաջւնէք:

-11-
Դուք ձեզ կը քննադատէք
ա.- Երբեմն:
բ.- Յաճախ:
գ.- Երբեք:

-12-
Կնոջ մը մազերը պէտք է ըլլան՝
ա.- Կարճ եւ միշտ լաւ սանտրուած:

բ.- Յաճախ փոխուի
գոյնը եւ ձեւը:
գ.- Միշտ երկար եւ արձակ ձգուած:

-13-
Եթէ դերասանուհի ըլլալիք, պիտի փափաքէիք ըլլալ՝
ա.- Քարոյ Պուլքէն:
բ.- Սոֆիա Լորէնը:
գ.- Նիքոլ Քիտմանը:

-14-
Հմայիչ կին մը պէտք է նմանի
ա.- «Սիւսփենս» փապաւէնի մը, որուն աւարտը չենք գիտեր:
բ.- Սերով կարկանդակի մը, գոր վայրկեան առաջ կ'ուզենք լափել:
գ.- Խմիչքի մը, որ գլխապտոյտ կը պատճառէ:

-15-
Այր մը հաստատ պահելու համար՝
ա.- Պէտք է յաճախ սոս խօսիլ:
բ.- Տեւաբար հետապնդել:
գ.- Միշտ հաճոյակատար ըլլալ:

	ա	բ	գ
1	2	3	1
2	2	1	3
3	2	3	1
4	1	2	3
5	2	3	1
6	3	2	1
7	3	2	1
8	2	3	1
9	2	1	3
10	3	1	2
11	2	3	1
12	1	3	2
13	1	2	3
14	1	3	2
15	3	1	2

ԱՐԳԻՆՔ

● Եթէ 22 կէտէն պակաս ունիք, խորհրդաւոր հմայք մըն էք: Ձեզ գրաւելով ժամանակի կարօտող դժուար առաքելութիւն մըն է: Ոչ ոք կրնայ հպարտանալ, որ առաջին վայրկեանէն հրապտրեց ձեզ:
Ձեր ձեւացուցած անտարբերութիւնը ձեր կարեւոր գեներեմ մէկն է, բայց շատ չշահագործեք, այլ պէտք աճահողորդ արձանի մը պիտի վերածուիք:

● Եթէ 23էն 38 կէտ հաւաքած էք, ուսումնասիրուած հմայքի տէր անձ մըն էք, ձեր զգայարանները եւ ամբողջ մարմինը (շարժուձեւեր, ձայն, հագուածք...) կը խօսին, կը հրապտրեն, եւ քիչեր կը դիմանան ձեր հմայքին, անգամ մը որ մուտք գործէք:
Բայց բելադրիլի է, որ չշահագործէք ձեր այս գեները, այլ պէտք ձեր շրջապատի կիցերուն հակակրակները պիտի շահիք:

● Եթէ 39 կէտ եւ աւելի հաւաքած էք, բնական եւ անկեղծ հմայքի տէր անձ մըն էք: Թարմ էք, բնական, շինծու, արեւստական ոչիցէ կայ ձեր վրայ, եւ ոչ մէկ ճիգի կը կարօտիք այրերը գրաւելու համար:
Այսպէս շարունակեցիք եւ կեանքի մէջ անպայման կը յաջողիք:

ՆՈՐԱԶԵԻՈՒԹԵԱՆ ԱՃԽԱՐԸՆ

ՉԵՒԱԳԷՏ ԺՈՐԺ ՀՐՊԷՅՔԱ



Չեւագտ Ժորժ Հրպէյքա:



Չեւագտ Հրպէյքայի յղացումներն անուշ մը:

Վերջերս, Փարիզի մէջ կազմակերպուած 2002ի գարնան «Նօթ Բուրիւր»ի փառատոնին իր մասնակցութիւնը բերած է իրանահայ ձեւագէտ Ժորժ Հրպէյքա, որ իր հաւաքատի կիներ» անունով:

Հրպէյքայի հաւաքածոյին տիրական դոյներէն ոսկեգոյնի զանազան երանգները, բոցավառ գոյները, բայց նաեւ՝ դասական սեւ ու ձերմակը:

Հրպէյքա իր հաւաքածոն ցուցադրեց Լուվրի թանգարանին մօտակայ շքեղ պանդոկի մը սրահներուն մէջ եւ հաւաքատի կիներ» անունով:

Ինչպէս կը նկատենք, վերջին տարիներուն իրանահայ երիտասարդ եւ տաղանդաւոր ձեւագէտներուն մէջ եւ հաւաքատի կիներ» անունով իր գործերը կը գործեն Եւրոպայի եւ Մ. Նահանգներու նորաձեւութեան աշխարհի մեծ դուռնէն ներս եւ զնահատելի յակողմէ՝ պատմութեան եւ մշակութիւն միջեւ:

ՆՈՒՆԱԳԻՐ

ԽՈՇԱՅ

- Պատրաստու թեան համար անհրաժեշտ են. -
- ◆ 1 գաւաթ ընկոյզ
 - ◆ 1 գաւաթ գինձ (սնոպար)
 - ◆ 1 գաւաթ նուշ
 - ◆ 1 գաւաթ չոր ծիրան
 - ◆ 1 գաւաթ չոր սալոր
 - ◆ 1 գաւաթ չամիչ
 - ◆ 1 գաւաթ չոր բալ (Ֆիշըն), եթէ կը փափաքիք
 - ◆ Շիշ մը ծիրանի հիւթ
 - ◆ Վարդի եւ ծաղիկի ջուր

Պատրաստուեալ կերպը -

Ապահովութեան համար բաղադրութիւնները մաքուր ջուրով ցողուել եւ ամբողջ գիշեր մը թրջել՝ 1 շիշ ծիրանի հիւթին վրայ աւելցնելով կասիայի մէկ կերպու փայտիկ, մեխակի 1 - 2 գամ, քանի մը կաթիլ վարդի ջուր, քանի մը կաթիլ ալ ծաղիկի ջուր:

Յաջորդ օրը սառնարան փոխադրել, հրամցնելէ առաջ կասիայի փայտիկները եւ մեխակի գամերը հանել եւ ներկայանալի ամաններու մէջ պաղ վիճակի մէջ հրամցնել:

Եթէ նկատենք, որ քիչ շատ թանձր է, կրնաք սուրճի գաւաթ մը ծիրանի հիւթ աւելցնել եւ խառնել:

Համբերութիւն եւ ժամանակ ունեցող տիկիններուն յայտնենք, որ խոշաֆը կարելի է հրամցնել «Աշխարհի» կողմէ անուշեղէնին երեսը զարդարելով: Անուշտ յաւելելով ժամանակի կը կարօտի, բայց շատ աւելի ներկայանալի եւ համեղ կ'ըլլայ:

Բարի՛ ախորժակ:

Պատրաստեց՝ ՇՈՒԻԿ ՍԱԻՍԱԳԱԼԵԱՆ

ՇԱԼԵՊ

ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՆ

ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Սրբոց Զառամնից Մանկանց տօնին առիթով, Զառաթ, 9 Մարտ 2002, Սրբոց Զառամնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի հանդիսաւոր Ս. պատարագ:

Յաւուր պատշաճի պիտի քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ՍՈՒՐԻՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմի)

Սկիզբ ժամերգութեան՝ առաւօտեան ժամը 8:00ին: Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու եւ հաղորդուելու օրուան խորհուրդով:

ԾԱՆՕԹ. - Ս. պատարագի աւարտին բաղակաւորութիւնը պատրաստած է հիւրասիրութիւն մը:

ԹԱՊԱԿԱՆՈՒԹԻՆ

Ս. ԶԱՌԱՍՆԻՅ ՄԱՆԿԱՆՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ONE SECOND IS ENOUGH... Արագը կը Պատահէ Երկարատեւի Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL.

...ԻՍԿ ՄԵՆԵ ՆԵՐԿԱՅ ԵՆԵ ԱՄԷՆ ԵՐԿԱՅՐԿԱՆ.




ԱՖՀԻԼ AFHIL

Սֆտ-ի Ենթ, Բ. Յարկ, 7եւ. եւ Յարկ. (01) 262231-242556-242557
Կոտ. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԱՅԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ԽՐԱՆԻՉ ԴԵՂԵՐՈՒ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ ՅՈՒՉԵԼ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԸ

ԱՅՍՕՐ՝ ՍԱԺԵՍ - Հ.Մ.Ը.Մ.

Երեկ Լիբանանի ժամանակ ֆրանսացի մարզիչ Ժոզե Գոմուշին, որ իր հնգամյա պայմանագրի ընթացքում պիտի փորձեի համաձայնագիր մը կնքել Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիոնին հետ, իբրև Լիբանանի ազգային խումբերու մարզիչ:

Վերջերս ան Լիվրպոլի եւ Պոքա ժոնիորի հետ փորձառական շրջան մը անցուցած էր. ան եօթը երկար տարիներ Լի Վալի մէջ ստանձնած է գլխաւոր մարզիչի դերը, մարզիչներ պատրաստելու աշխատանքի կողքին:

Պոմուշին, որ իջեւանած է «Մարիոթ» պանդոկը, այսօր ներկայ պիտի գտնուի Սաժէս - Հ.Մ.Ը.Մ. մրցումին, որ տեղի պիտի ունենայ Պուրճ Համուտի Բաղաքապետարանի դաշտին վրայ, ժամը 2:45ին:

Երեկ՝ Չորեքշաբթի, Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիոնի 15րդ հանգրուանին տեղի ունեցան չորս ճակատումներ, որոնց ընթացքին մեծագոյն յաղթանակը եղաւ Նրժմէ. անիկա 4-1 արդիւնքով պարտութեան մատնեց Աիլի Սայտան եւ առժամաբար գրաւեց պարագուլիսի դիրքը:

Հ.Մ.Ս. 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Շապաա Սահէլէն, մինչ Անսար - Սաֆա մրցումը վերջ գտաւ 1-1 արդիւնքով: Չորրորդ եւ վերջին հանդիպումը վերջ գտաւ Թատամոն Սուրի յաղթանակով, որ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Պրժոն:

Այսօր կը կատարուին մնացեալ երեք մրցումները, որոնց ընթացքին Հ.Մ.Ը.Մ. կարելոր հանդիպում մը ունի կատարելիք Սաժէսի դէմ:

Նրժմէի դէմ իր կատարած մրցումին, Հ.Մ.Ը.Մ. փաստեց, որ բաւական բարելաւած է իր խաղարկութիւնը, բաղդատմամբ երթի մրցումներուն:

Վետեւաբար կը սպասուի, որ Հ.Մ.Ը.Մ. ի տղաքը դաշտ ներկայանան այն ոգիով, որ պայքարած էին Նրժմէի դէմ, իրենց կողքին ունենալով իրենց համակիրները, որոնք այսօր եւս պիտի ուղղուին Պուրճ Համուտի Բաղաքապետարանի դաշտ, քաջալերելու համար իրենց խումբը, որ մանաւանդ ներկայ այս հանգրուանին կարիքը ունի անվերապահ նեցուկի:

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը:

	Ժամ	Դաշտ
Սաժէս - Հ.Մ.Ը.Մ.	2:45ից	Պ. Համուտ
Ահտ - Ալիսա Ալեյ	2:45ից	Մ. Աւան
Ռասիկ - Սալամ	4:45ից	Պէյրուբ

ԿՌՓԱՄԱՐՏ

ԼՈՒԻՍ - ԹԱՅԱՐՆ ԾԱԿԱՏՈՒՄԻՆ ՎԱՅՐԸ ՏԱԿԱԻՆ ԿԸ ՄՆԱՅ ԱՆՈՐՈՇ

Երոպայի Կոփամարտի Միութեան նախագահ Ռուպերտ Մարթինը կը յայտնէ, թէ Մատրիտ մեծ առիթ մը ունի հիւրընկալելու այս տարի տեղի ունենալիք կոփամարտի ծանր կշիռի աշխարհի ֆուտբոլի մրցումները գազաքի սպասած ճակատումը: Լիմոնքս Լուիսի եւ Մայք Թայսընի միջեւ, անշուշտ թե՛ այդ մէկը տեղի չունենայ Միացեալ Նահանգներու մէջ:

«Եթէ յառաջիկայ քանի մը օրերուն շոտալանդացի իշխան ճակատումին վայրը, աշխատանք պիտի տարուի, որ անիկա կատարուի Միացեալ Նահանգներէ դուրս: Այսօր Մատրիտի «Մանրիակո Պեդրասո» դաշտը այդ իմաստով գլխաւոր թեկնածուներէն մէկն է, որ կրնայ այդ ճակատումը տեղի ունենալ», կը յայտնէ Մարթինը:

Աշխարհի տարբեր ցամաքամասերէն շուրջ 20 երկիրներ իրենց թեկնածուներուն յայտնած են հիւրընկալելու Լուիս - Թայսըն ճակատումը, որ կոփամարտի պատմութեան մէջ մեծագոյն ճակատումը պիտի ըլլայ:

Հակառակ անոր որ 35 տարեկան Թայսընի անձնակազմին յայտարարութիւնը կ'ըսէ, թէ ճակատումը տեղի պիտի ունենայ Միացեալ Նահանգներու մէջ, սակայն յստակ ոչինչ կայ այդ ուղղութեամբ:

Նշենք, թէ այդ ճակատումին համար կարելոր թեկնածուներէն են Պէյրուբ, Մանիլա, Շոտլանդիա եւ Բոսնիան:

Հ.Մ.Ը.Մ. ՊԵՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԳԻՒՄ

ԶԱՏԿՈՒԱՆ ՊԱՋԱՐ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի ՊԵՅՐՈՒԹԻ ՍԿԱՒԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Տեղի կ'ունենայ Շաբաթ, 16 Մարտ 2002ին, կեսօրէ ետք ժամը 2:00ն սկսեալ, քաղաքի ակումբին մէջ:

ԼԱՆՍ ԱՄՐԱՊՈՒՆԵՑ ՊԱՐԱԳՆՈՒՄԻ ԴԻՐԸ

Ֆրանսայի ֆուտբոլի ֆեդերացիոնի 28րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Պարիս - Փարիզ Ս. Փ. 0-1
Լիոն - Մոնպար 1-0
Կեկկան - Լորիան 4-3
Լանս - Ռեկո 2-0
Մեա - Լիլ 0-1
Նանթ - Սոչո 0-0
Թրուա - Մոնպելիէ 2-0
Մտան - Պոլտո 1-0
Մարսէյ - Օքսէն 1-0

- ԴԱՍԱԻՈՐՈՒՄ
1. Լանս 59
 2. Լիոն 53
 3. Փարիզ Ս. Փ. 48
 4. Օքսէն 48
 5. Լիլ 48
-
16. Կեկկան 29
 17. Լորիան 27
 18. Մեա 25

ԵՆԻ. Է. ԷՖ. Ա.Ն ՊԱՏԺԵՑ ԻՍՐԱՅԷԼԸ

ԵՆ. Է. ԷՖ. Ա.Ն երեկ պատմեց Իսրայէլը՝ երկրին անապահով կացութեան պատճառով: Ան կը կախակալուի միջազգային բոլոր մրցումներէն, ցնոր տնօրինութիւն:

Վետեւաբար, յառաջիկայ Հինգշաբթի, 14 Մարտին Իսրայէլի մէջ տեղի ունենալիք Հափոնէլ Թէլ Աւիւ - Ա. Սէ. Միլան մրցումը (ԵՆ. Է. ԷՖ. Ա.) տեղի պիտի ունենայ օտար դաշտի վրայ, որ մտոյի ապագային պիտի յայտարարուի ԵՆ. Է. ԷՖ. Ա.ին կողմէ:

«Վերջին քանի մը ամիսներուն ԵՆ. Է. ԷՖ. Ա.ն շատ մտոյն կը հետաքրքրուէր Իսրայէլի անապահով կացութեամբ. վերիվարումները այժմ կ'ընդգրկեն նոյնիսկ մայրաքաղաք Թէլ Աւիւ: Կացութիւնը կը մնայ մտահոգիչ, հետաւարտ այս պայտօնցիկ մթնոլորտը արգելք կը հանդիսանայ, որ ֆուտբոլի միջազգային մրցում տեղի ունենայ», կ'ըսէ ԵՆ. Է. ԷՖ. Ա.ի մէկ պատասխանատուն:

ԵՆ. ՊԻ. ԷՅ.

ԼԷՅՔԸՐԸ Կ'ԱՐՇԱԻԷ. ՇԱՔԻԼ ՕՆԻԼ ՆՇԱՆԱԿԵՑ 40 ԿԷՏ

ԵՆ. ՊԻ. Էյ.ի երէկուան մրցումներուն, Տալաս Մալըրիքս իր դաշտին վրայ 81-77 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ֆէօնիքս Սանգրը, արձանագրելով եղանակի իր 42րդ յաղթանակը: Անիկա այժմ այն երեք խումբերէն մէկն է, որ արձանագրած է առաւելագոյն յաղթանակը:

Տալաս, որ անցեալ շաբթուանէն սոսիս իր արձանագրած յաղթանակներուն շնորհիւ այժմ կը գրաւէ Միջարեւմտեան գօտիի (Արեւմտեան շրջան) պարագուլիսի դիրքը, իր յաղթանակը յաջողեցաւ կերտել շնորհիւ Տըրք Նովիցիքի, որ նշանակեց 30 կէտ եւ 20 ռիպուստ: Անոր խմբակիցը՝ Մայքըլ Ֆիլիպսը նշանակեց 24 կէտ եւ 9 ռիպուստ, իսկ Մալըրիքսի այլ մարզիկ մը՝ Ռակֆ Լաֆրէսթը, 12 կէտ եւ 12 ռիպուստ:

Սան Անթոնիոյի մէջ, Սփըրը 109-88 արդիւնքով պարտութեան մատնեց Կոլորն Սթէյթ Ուոլըրը: Սփըրըի մարզիկ Տէյլօր Ռոպինսոնը յաջողեցաւ նշանակել իր ասպրեզին քսանհարբերորդ կէտը, այսպիսով դառնալով 27րդ մարզիկը, որ կը հասնի այդ սահմանին: Մրցումին աւարտին ան նշանակեց 13 կէտ եւ 9 ռիպուստ, իսկ անոր խմբակից Թիմ Տանթըն՝ 23 կէտ:

Այսպիսով, յաջորդաբար 16րդ անգամ ըլլալով Սփըրը պարտութեան մատնեց իր մրցակիցը: Լոս Անջելըսի մէջ, Լէյքըրը 101-92 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Նիւ Ճըրզի Նէթսը: Ցաղթական կազմին մարզիկ Շաքիլ Օնիլը նշանակեց 40 կէտ եւ 12 ռիպուստ:

Ուաշինկթընի մէջ, Ուիզարտ 115-90 արդիւնքով պարտութեան մատնեց Շիքագո Պուլզը, հակառակ անոր որ մարզիկներէն Ճէյլըն Ռոպ Նշանակեց 31 կէտ:

Հակառակ եղանակի իր եղանակի իր 44րդ պարտութեան մատնեց Շիքագո Պուլզը, հակառակ անոր որ մարզիկներէն Ճէյլըն Ռոպ Նշանակեց 31 կէտ:



Էլըն Պէքսթըր

Պելճիքացի հեծելախումբի ֆրանս վանտէպրուք մտադրած է շարունակել իր ասպարէզը, հակառակ անոր որ ան դուրս դրուեցաւ իր խումբէն՝ Տոնո Ֆարմիլիոնի, երբ ոստիկանութիւնը անոր բնակարանէն թմրեցուցիչ գտաւ, կը յայտնէ պելճիքական օրաթերթը մը:

27 տարեկան պելճիքացի յայտնեց, թէ աշխարհի ամէնէն ուրախ անձը պիտի ըլլայ, եթէ յաջողի շարունակել հեծելաշախի իր ասպարէզը:

Ըստ պելճիքական մամուլին, անոր երազները կրնան իրականանալ, եթէ անցեալ շաբաթ կատարուած անոր քննութիւնները դրական արդիւնք տան:

Վանտէպրուք յայտնեց, թէ արդէն իսկ պելճիքական երկու խումբեր՝ Մարիլիքս - Շարլըրուա եւ Քոլսթրոմի - Փայմանս արդէն իսկ շատ մտոյն հետաքրքրուած են իրմով:

ՍԿՈՎՏԻՍԻ Էլըն Պէքսթըր, որ անցեալ ամիս Սուրբ Լէյք Սիթիի մէջ տեղի ունեցած 2002ի Չմեռնային Ողիմպիականի մրցումներուն շահած էր պրոնկ մետալ մը՝ տղոց դահուկարշախի Սլալոմի մրցումներուն, գործածած է իրանիս դեղեր, կը յայտնէ Բ Ր Ի Ս Ա Ն Ի Ո Ղ Ողիմպիական կոմիտէն:

Թէեւ այժմ ոչինչ կ'ըսուի, թէ 28 տարեկան Պէքսթըրէն պիտի խուլի՞ պրոնկ մետալը, թէ ան պիտի սպասէ մինչեւ Միջազգային Ողիմպիական կոմիտէի յայտարարութիւնը:

ԻՏԱԼԻՈՅ ֆուտբոլի ֆետերասիոնին մէկ պատասխանատուն յայտնեց, թէ Լացիո Ռոմայի յետապահ Եափ Սթէյմ դաշտ պիտի վերադառնայ յառաջիկայ Մարտ 16ին, երբ անոր ստացած պատիժը հասած պիտի ըլլայ իր աւարտին:

Թմրեցուցիչ գործածած ըլլալու յանցանքով մարզիկ Սթէյմ չորս ամիսով կախակալուած էր ֆետերասիոնին կողմէ:

Լացիո Ռոմա ֆետերասիոնին դիմելով փափաք յայտնած էր, որ Սթէյմ վերադառնայ այս շաբաթավերջին տեղի ունենալիք Հոմի տերապիին, սակայն ֆետերասիոնը շեշտած էր, որ ան դաշտ կրնայ վերադառնալ Պելճիայի դէմ տեղի ունենալիք մրցումին միայն, այսինքն՝ Մարտ 16ին:

Նշենք, թէ Սթէյմ անցեալ Օգոստոսին, Մանչեսթըր Եունայթըտէն փոխանցուած էր Լացիոն:

ԿԷՍԸՈՅՆ ՊԻՏԻ ՄԻԱՆԱՅ ՊԸՌՆԼԻԻ

Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին միջազգային նախկին մրցապահներէն Փոլ Կէսըն շատ հաւանաբար ֆուտբոլիստի իր ասպարէզը աւարտէ Պրոնիլի հետ (Ա. դասակարգ), կը յայտնէ այս վերջինին նախագահը՝ Պէրի Քիլպար:

Պրոնիլի, որ կը փորձէ իր կազմը զօրացնել նախքան Մարտ անուան աւարտը, երբ արդէն իսկ կը փակուի մարզիկներու փոխանցման սակարարք, Կէսընի մտաշարկած է մինչեւ այս եղանակին աւարտը միայն խումբին, լքելով իր ակումբը՝ Էվըրթընը: Հակառակ անոր որ Էվըրթընի հետ անոր պայմանագրութիւնը կ'աւարտի այս եղանակին, սակայն, վերջին երեք մրցումներուն խումբին մաս չկալուելով, ան շատ հաւանաբար յրջօրէն մտածէ այս փոխանցման գծով:

34 տարեկան Կէսըն, որ 2000 տարուան ամրան Միտլըպոլոյի միջազգային Էվըրթընի, իր 18 տարուան ֆուտբոլիստի ասպարէզին ընթացքին մաս կազմած է Նիւքեմբըրի, Թորենհամի, Լացիո Ռոմայի եւ Ռէյնսըրի:

Կէսըն, որ 57 անգամ կրած է Անգլիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը, 1998ի Մոնտրալի մարզիչ Կլէյն Հատրի կողմէ նկատու շատուելով, հետացած է միջազգային ասպարէզէն:



Տըրք Նովիցիքի



Ֆրանց Վանտէպրուք, որ ոստիկաններու հսկողութեամբ դուրս կու գայ դատարանէն:

